



59. ԿԻՍՐԱՐ ԱՐՏ

Հայ մե վար ու ցանք կէներ, քուրդ մե արտի մոտով գիկա
դընցնա, կըսե.

— Արտ կիսրար է:

Հայն բանի տեղ չը դնե քրդու ըսած, սուա ու փուա ուր վար
կէնե:

Կալոցին հայն ուր ցորեն կը հանե, օր տանե տուն, քուրդ դիկա
վըր գլխուն կը կանի:

— Յորնի կեսն իմն է:

Հայն կը պաղքերնի մնա: Գործ դընկնա դատարան:

Գատավոր կը հարցու.

— Յանելու վախտ քուրդն օր ըսեց «արտ կիսրար է», դու բե-
րանդի բացի՞ր, հա, յա չէ ըսի՞ր:

— Չէ՛, բերանսի չը բացի, սուա ու փուա մանցի,— կըսե հայն:

— Է՛,— կըսե դատավոր,— օր սուա ու փուա իս մանցի, քուրդն
հախլը է, ցորնի կես պտի տաս ինոր: Շարիաթ լե հմալ կըսե՝ ո՛ն
ձեն չը հանե՛՛ էնի խաբուլ է:

Քուրդն զդատ կը տանե, ցորնի կես կառնե կէրթա:

